



# ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒՄ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Վերափոխումն Ետք Երրորդ Կրտսեր

05 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳՐՔԵՆ  
(10.12-19)

**Ե**րբոր Տէրը ամբողջացնէ այն ինչ մտադրած էր կատարել Սիոն լեռան վրայ՝ Երուսաղէմի մէջ, իր բարկութիւնը պիտի թափէ Ասորեստանի մեծամիտ թագաւորին վրայ, որ փառքէն կուրցած՝ գոռողանալով կ'ըսէր. «Իմ զօրութեամբս, իմ իմաստութեամբս եւ իմ հանճարովս իրագործեցի այս բոլորը. ազգերու սահմանները ջնջեցի, անոնց զինամթերքը աւարեցի, տակնուվրայ ըրի անոնց բազմամարդ քաղաքները։ Ամբողջ աշխարհը ձեռքովս գրաւեցի՝ թռչունի բոյն մը ձեռք անցընելու պէս, եւ մարդիկը գերեվարեցի՝ բոյներու մէջ մնացած հաւկիթները ժողվելու պէս։ Ոեւէ մէկը ձեռքէս չազատեցաւ, եւ չեղաւ մէկը որ ինծի դէմ ելլէր, բերանը բանար եւ ճիկ մը հանէր»։

Այսպէս կ'ըսէ Տէրը. «Կացինը կրնա՞յ վեր բարձրանալ առանց զինք վերցնող փայտահատին, կամ սղոցը կրնա՞յ սղոցել առանց զայն շարժողին. կամ նոյնպէս, փայտն ու գաւազանը կրնա՞ն զարնել եթէ մարդը զանոնք ձեռքը չառնէ»։

Ո՞չ անշուշտ։ Արդ, երկնաւոր Զօրքերու Տէրը պարծանքիդ դիմաց անարդանք պիտի բերէ քեզի եւ բոցավառ կրակով մոխիրի պիտի վերածէ փառքդ։

Աստուած, որ իսրայէլի համար լոյս

է, այրող կրակ պիտի ըլլայ Առեստանի համար եւ զայն պիտի ոչնչացնէ այնպէս՝ ինչպէս բոցավառ կրակը կը սպառէ խոտն ու անտառը։

Այն օրը պիտի կորսուին լեռներն ու բլուրները եւ անտառները. Տէրը պիտի ոչնչացնէ ասորեստանցիները՝ հոգի եւ մարմին միասին։ Ազատուողները իրենց վրայ պիտի կրեն հարուածին հետքը այնպէս՝ ինչպէս հրդեհէն ազատած մարդը կ'ունենայ։ Իսկ անոնցմէ ողջ մնացողները այնքան քիչ պիտի ըլլան թիւով, որ երեխայ մը անդամ պիտի կարենայ հաշուել։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒԹ ԳՐԱԾ  
ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԻՆ  
(2.12-3.3)

**Ե**րբ Տրովադա հասայ, Քրիստոսի Աւետարանը քարոզելու համար, Տէրը իմ առջեւս յաջողութեան դուռը բացաւ։ Բայց ես չափազանց մտահոգ էի, որովհետեւ հոն չգտայ Տիտոսը, մեր եղբայրը։ Ուստի տրովադացիներէն հրաժեշտ առնելով Մակեդոնիա անցայ։

Արդ, գոհութիւն Աստուծոյ, որ Յիսուս Քրիստոսի յաղթական երթին մասնակից կը դարձնէ մեզ, եւ մեր միջոցաւ իր գիտութեան բոյրը կը տարածէ ամենուրեք։ Փրկուողներուն մէջ ապրինք, թէ կորսուողներուն, մեր կեանքերը Քրիստոսի ձեռքով

**Աստուծոյ ընծայուած անուշահոտ խունկի պէս իրենց բոյրը կը տարածեն:** Կորսուղներուն համար մահաբոյր կը թուի մեր կեանքը, մինչ փրկուղներուն համար՝ կեանքի բուրմունք: Բայց ասիկա ճշմարիտ է ո՛չ թէ անոնց համար որոնք Աստուծոյ խօսքը վաճառքի կը հանեն, այլ մեզի՝ համար, որ անկեղծօրէն կը խօսինք Աստուծոյ առջեւ, որպէս Քրիստոսի միացած Աստուծոյ պատգամաւորները:

Բայց ասիկա ըսելով, արդեօք ուրիշներուն պէս մենք մեզ գովաբանա՞ծ կ'ըլլանք: Պէտք ունի՞նք միթէ ձեզմէ յանձնարարական առնելու կամ այդպիսի նամակներով ձեզի ներկայանալու, ինչպէս ոմանք կ'ընեն: Որովհետեւ մեր լաւագոյն յանձնարարականը, որ ձեր սիրտերուն մէջ գրուած է՝ դո՛ւք էք ձեր կեանքերով, զոր ամէն մարդ կրնայ տեսնել ու կարդալ, եւ կրնայ ճանչնալ՝ թէ Քրիստոսի՝ նամակն էք դուք, պարզապէս մեր ձեռքով գրուած: Գրուած ո՛չ թէ մելանով, այլ կենդանի Աստուծոյ Հոգիով. ո՛չ թէ քարեղէն տախտակներու, այլ ձեր սիրտերու մարմնեղէն տախտակներուն վրայ:

### ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍ ՄԱՐԿՈՍԻ (6.30-44)

**Առաքեալները վերադարձան**  
**Յիսուսի մօտ եւ անոր պատմեցին**  
ինչ որ կատարեցին եւ սորվեցուցին: Յիսուս անոնց ըսաւ. «Եկ՛ք երթանք ամայի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը կը հանգչիք», որովհետեւ ժողովուրդին շատերուն երթալ-գալուն պատճառով ուտելու իսկ առիթ չէին ունեցած: Հետեւաբար իրենք առանձինն նաւակ առին եւ գացին

ամայի վայր մը: Երբ ժողովուրդը տեսաւ անոնց երթալը եւ գիտցաւ թէ Յիսուս ալ անոնց հետ է, ըրջակայ քաղաքներու բնակիչներէն շատեր ծովեղերքէն վազելով անոնցմէ առաջ հասան անոնց երթալիք վայրը: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ եւ տեսաւ ամբոխը, գթաց անոնց, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու կը նմանէին: Ապա սկսաւ երկարօրէն ուսուցանել անոնց:

Երբ բաւական ժամանակ անցաւ, աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին. «Ամայի տեղ ենք, եւ արդէն բաւական ուշ է. չմթնցած, արձակէ ժողովուրդը, որպէսզի ըրջակայ ագարակներն ու գիւղերը երթան իրենց համար ուտելիք գնելու, որովհետեւ ուտելիք չունին»: Յիսուս անոնց ըսաւ. «Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք հարցուցին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ երկու հարիւր դահեկանի հաց գնենք զանոնք կերակրելու համար»: Յիսուս ըսաւ. «Գացէ՞ք, տեսէք թէ քանի՞ հաց ունիք»: Աշակերտները ստուգեցին եւ ըսին. «Հինգ հաց եւ երկու ձուկ»: Յիսուս հրամայեց աշակերտներուն որ ժողովուրդը խումբ-խումբ նստեցնեն դալար խոտին վրայ, եւ անոնք հարիւրական եւ յիսունական հոգիներէ բաղկացած խումբերով նստան: Ապա Յիսուս առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, երկինք նայեցաւ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն որպէսզի բաշխեն, եւ երկու ձուկերը բաժնեց ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան, եւ աւելցած հացի եւ ձուկի կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը, միայն այր մարդիկը հաշուած, շուրջ հինգ հազար էր: